

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի հին և միջնադարյան մշակույթի և պատմության տեսակետից հնագիտական հետազոտություններն առանձնակի արժեք ունեն։ Պատմագիտական, լեզվաբանական, մարդաբանական մի շարք վերականգնումներ հաճախ հնարավոր է հիմնավորել կամ բացառել հնագիտական-մշակութաբանական տվյալների դաշտում։ Դա առավել չափով կարևոր է, երբ խոսք է գնում որևէ մշակույթի էթնիկական կերպարի պարզաբանման մասին։ Գաղտնիք չէ, որ Արցախի պատմության և մշակույթի ուսումնասիրությունն ընթացել, ընթանում է և, ցավոք, տեսանելի ապագայում էլ ընթանալու է քաղաքական նպատակներ հետապնդող «ընդդիմախոսների» աչալուրջ հսկողության և պատեհ-անպատեհ հարծակումների ներքո։ Նման պայմաններում հնագիտական նյութը, որպես հին ժամանակներին վերաբերող չեզոք աղբյուր, արտակարգ նշանակություն է ձեռք բերում։ Մինչև արցախյան շարժումը հայագիտությունը զրկված էր Արցախում հնագիտական ուսումնասիրություններ կատարելու հնարավորությունից։ Այս ասպարեզում տերն ու տնօրենը ադրբեջանցի հետազոտողներն էին, որոնք հուշարձանի թե՛ ընտրությունը և թե՛ նյութի հրատարակությունը կատարում էին խիստ «ընտրողաբար»՝ թաքցվում կամ ավերվում էր այն, ինչը ձեռնտու չէր, հուշարձանը պեղողի «իրավունքով» արվում էին անհիմն հայտարարություններ, առաջադրվում կեղծ թվագրություններ ևն։ Պատահական չէ, որ 60-ական թթ. սկսած՝ Արցախում զգալի ծավալ ստացած պեղումների արդյունքները հրատարակվում էին բացառապես մեկ-երկու էջանոց հաղորդումների տեսքով՝ գիտնականներին զրկելով նյութի աղբյուրագիտական հավաստիության մեջ համոզվելու կամ կողմնորոշվելու հնարավորությունից։ Հայագիտությունը տասնամյակներ շարունակ զրկված էր Արցախում հնագիտական հետազոտություններ կատարելու

հնարավորությունից և ստիպված էր ավելի հաճախ հերքել ադրբեջանցի հնագետների միտումնավոր մեկնաբանությունները, քան թե առաջադրել և լուծել սեփական զարգացումից բխող պրոբլեմներ: Թվում էր Արցախի ազատագրումը լիակատար հիմք էր օբյեկտիվ այս պակասը լրացնելու համար:

Սակայն այսօր էլ Արցախի պատմության և մշակույթի ուսումնասիրության ասպարեզում ակնհայտորեն զգացվում է հնագիտական հուշարձանների և լայն առումով հնագիտական մշակույթի ներգրավման խիստ ցածր մակարդակը:

Արցախի հնագիտական հետազոտություններն այսօր կարելի է բնութագրել որպես անհատական նախաձեռնությունների վրա հենվող, մասնավոր անձանց ու ոչ պետական կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ու այդ իսկ պատճառով էլ բավականին սահմանափակ ծավալներ և թեմաներ ներառող բնագավառ:

Խիստ բնութագրական պիտի համարել, որ Արցախի հուշարձանների ցանկացած հետազոտություն առաջ է բերում ադրբեջանական իշխանությունների բողոքը՝ ընդհուպ մինչև միջազգային կազմակերպություններ նոտաների հղումը: Ի տարբերություն ադրբեջանական խանդոտ կեցվածքի, թե՛ Հայաստանի և թե՛ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները, ցավոք, որդեգրել են չեզոք կեցվածք: Վերջին տարիների հնագիտական պեղումները ձեռնարկվում, ֆինանսավորվում և իրականացվում են բացառապես անհատ մարդկանց և հասարակական կազմակերպությունների կողմից (Հարությունյանների ընտանիքը ԱՄՆ Նյու-Ջերսի նահանգից, «Ժամ Պողոսյան և որդիներ» հիմնադրամ, Հիմնավորման և վերաբնակեցման Երկիր միություն, «Շուշի» հիմնադրամ, Մշակութային հետազոտությունների «Կենսա ծառ» կենտրոն):

Մերօրյա առաջին հնագիտական հետազոտություններն Արցախում ձեռնարկվել են հենց 1988 թ., երբ ուսումնասիրվել է Նոր Արմենավանի վաղքրիստոնեական դամբարանադաշտը¹: Դամբարանը բացվել էր պատահաբար, շինարարական աշխատանքների ժամանակ: Մեր կողմից պեղվել են 13 դամբարաններ, որոնց քննության արդյունքում

¹ **Պետրոսյան Գ.**, Նոր Արմենավանի դամբարանադաշտը - Մշակույթ, 1989, թիվ 1: **Նույնի**, Նոր Արմենավանի վաղմիջնադարյան դամբարանադաշտը - Հանրապետական հնագիտական մատաչրջան, Ջեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1989, էջ 76-78:

եզակացվեց, որ այն վաղըրիստոնեական դամբարանադաշտ է և վերաբերում է 6-8-րդ դարերին:

1990 թ. հետախուզական պեղումներ են կատարվել Մեղրագետի բնակատեղում և Շոշի դամբարանադաշտում¹: Բնակատեղին հայտնաբերվել է պատահաբար, մենք միայն հետախուզական պեղումներ ենք իրականացրել, բացվել է կավակերտ մի հարթակ, գտնվել են եռանկյունանձև քարե կոթողներ, սև-դարչնագույն փայլեցունով և մատնեքներով հարդարված կարաս, սև-դարչնագույն փայլեցունով և անփայլ կարասների, ձևավոր կանթերով սափորների և չպրոֆիլավորված շրթով թասերի բեկորներ, սարդիոնից և մածուկից պատրաստած ուլունքներ, որոնք հնարավորություն են տալիս բնակատեղին թվագրել 9-6-րդ դարերով:

Շոշի դամբարանադաշտում, որը գտնվում է համանուն գյուղի մերձակայքում, մեր կողմից վավերացվել են 62 դամբարան-բլուրներ. դրանք 10-40 մ պարագծով, մինչև 2 մ բարձրությամբ արհեստական թմբեր են՝ ճեղքված քարով շարված օղակաձև զրահներով և կենտրոնում արհեստական լիցքի մեջ տեղադրված մեկական սալարկղերով: Մեր կողմից պեղվել են երկու դամբարաններ, որոնք թալանված էին: Խիստ աղքատիկ գտածոներն այնուամենայնիվ հիմք տվեցին դրանք թվագրել 2 մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջով և առաջին հազարամյակի սկզբով: Ինչպես ցույց են տալիս Շուշիի և շրջակայքի հնագիտական քարտեզը և 2005 թ. պեղումները՝ Կարկառի հոսանքը ներկայանում է մ. թ. ա. առաջին հազարամյակի առաջին կեսի դամբարանային հզոր մշակույթով: Ուստի կարծում են այդ մշակույթի ընդհանրական կերպարի ստեղծումը շատ բանով կնպաստի, որ հայ ժողովրդի վերջնական ձևավորման խնդիրները լեռնաշխարհի այս անկյունում դրվեն գիտական հիմքերի վրա:

1988-1990 թթ.. պեղումները կատարել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը և ֆինանսավորվել է հենց ինստիտուտի կողմից: Հատուկ պետք է ընդգծել ինստիտուտի այն ժամանակվա տնօրեն Գևորգ Տիրացյանի առանձնահատուկ վերաբեր-

¹ Պետրոսյան Դ., Սաֆարյան Վ., Հետախուզական պեղումներ Արցախում, Հանրապետական հնագիտական լուսատվության, Ձեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1991, էջ 53-54:

մունքն ու աջակցությունը: Սակայն մի կողմից Ադրբեջանի պարտադրած պատերազմը, մյուս կողմից՝ միջոցների բացակայությունը հնարավորություն չտվեցին հետագա պեղումներ ձեռնարկել:

1995 թ. ին և Արցախի պետական համալսարանի ռեկտոր, մարդաբանության դոկտոր Լևոն Եպիսկոպոսյանի ջանքերով ստեղծվեց ԳԳ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Արցախի պետական համալսարանի միացյալ հնագիտական արշավախումբը, որի կազմում ընդգրկվեցին նաև Արցախի համալսարանի դասախոսներ Յու. Ասրյանը, Վ. Սաֆարյանը (հնագետներ), Վ. Բալայանը (Արցախի համալսարանին կից Հայագիտական կենտրոնի տնօրեն), Վ. Հովսեփյանը (ճարտարապետ): Արշավախումբը 1995 թ. հետախուզեց մի շարք բազմաշերտ հուշարձաններ և այդ տվյալների հիման վրա 1996 թ. Արցախի պետական համալսարանի ֆինանսական աջակցությամբ սկսեց դրանցից առավել հեռանկարային թվացող մեկի՝ Քարաբլուր հնավայրի հետախուզական պեղումները: Բնակատեղին, որն ունի բրոնզից մինչև ուշ միջնադարը ներառող մշակութային շերտեր, և գտնվում է վաղ բրոնզից սկսած խիստ մշակութայնացված մի միջավայրում՝ Կարկառի և Բադարայի միջագետքում և տեղանքի ամենաիշխող բարձունքն է: Բնակատեղուն կից վավերացվել են նաև երկու դամբարանադաշտեր՝ տեղադրված նրանից դեպի արևելք և արևմուտք: Արևմտյան դամբարանադաշտը վերաբերում է Ք. ա. IX-VIII դդ., իսկ արևելյանը, որը բաղկացած է բազմաթիվ խոշոր ու մանր հողաթմբերից, կրոմեխներից և քարարկերից պատկանում է Ք. ա. XI-IX դդ.: Մասնավորապես այդ ժամանակ պեղվել են երկու ավերված դամբարաններ: Այն Խոջալուի հանրահայտ դամբարանադաշտից հեռու է ընդամենը մեկ կիլոմետր և այս առումով վաղուց արդեն լավ հրատարակված, թվագրված և մեկնաբանված նյութերի հետ լայն զուգահեռների հնարավորություն է ընձեռում: Պեղումներով բացվել է նաև միջնադարյան մի հետաքրքիր կառույց, որը քրիստոնեական մատուռի և օջախ-սրբարանի մի բացառիկ համադրություն է ներկայացնում: Պեղումների նյութերը և պատահական գտածոները հանձնվել են Արցախի պետական համալսարանի Հայագիտական կենտրոն և կազմել են նորաստեղծ թանգարանի հիմքը¹:

¹ Պետրոսյան Զ., Եպիսկոպոսյան Լ., Ասրյան Յու., Սաֆարյան Վ., Բալայան Վ., Հովսեփյան Վ., Հետախուզական պեղումներ Արցախի Քարաբլուր հնավայրում - Հին Հայաստան 428

Ցավոք, պեղումները, որոնք գիտական մեծ արժեք ունեին և աշխույժ հետաքրքրություն էին առաջացրել Արցախում (դրանք ներկայացվեցին ԼՂՀ և ՀՀ հեռուստատեսությամբ, թերթերում), ֆինանսների բացակայության պատճառով ընդհատվեցին: Միայն 2002 թ. հնարավոր դարձավ՝ նորից Արցախ համալսարանի համեստ միջոցներով հետազոտել ևս մեկ դամբարանաբլուր, որը գտնվում է արևելյան դամբարանադաշտի հարավ-արևելյան մասում:

1996 թ. աշնանը առանց որևէ ֆինանսավորման Վ. Սաֆարյանի կողմից ուսումնասիրվել են Աղղամի մոտակայքում շինարարական աշխատանքների ժամանակ բացված կարասային թաղումները, 1997 թ. արշավախմբի անդամների ջանքերով իրագործվել է Ստեփանակերտի մերձակայքում գտնվող՝ տարիներ առաջ սկսած, բայց կիսատ մնացած կուրգանի պեղումները: Հնագիտական հետազոտությունները վերսկսելու հարցով 1997-1998 թթ. դիմումներ ենք հղել ՀՀ համապատասխան նախարարություններ, ԼՂՀ իշխանություններին, սակայն դրանք կամ մերժվել են կամ մնացել անպատասխան:

Պեղումների նոր ալիքն սկսվել է վերջին տարիներին: Երեք տարի է արդեն, որ Լևոն Եպիսկոպոսյանի և մասամբ իմ նախաձեռնությամբ արտասահմանցի մի շարք հնէամարդաբաններ և հնագետներ սկսել են Ազոխի քարանձավի ուսումնասիրությունները: Արդյունքներն ուղղակի ապշեցուցիչ են: Մնում է ավստսալ, որ հայաստանյան հայագիտությունն այդպես էլ անմասն է մնում թե հետազոտություններին, և թե գոնե արդյունքների մասին տեղյակ լինելուն¹:

2004 թ. Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության և Մշակութային հետազոտությունների «Կենաց ծառ» կենտրոնի նախաձեռնությամբ ստեղծվեց հնագիտական արշավախումբ, որը ղեկավարում են ես, և որի կազմում են ՀՀ և ԼՂՀ մի շարք մասնագետներ: Վերջին տարիների հետազոտությունները մենք որպես սկզբունք կենտրոնացնում ենք այն տարածքներ-

տանի մշակույթը, Հնագիտական 11-րդ համրապետական մատաչրջան, Երևան, 1998, էջ 53-54: **Պետրոսյան Հ.**, Արցախի նորագյուտ սրբարանը և նրա ազգագրական զուգահեռները - Հանրապետական ազգագրական գիտաժողով, Ջեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1997, էջ 47-48: **Նույմի,** Քարաբլուրի նորագյուտ սրբարանը և «սուրբ օջախների» պաշտամունքն Արցախում – Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 347-356:

¹ Ազոխի քարանձավի պեղումների մասին տես այս ժողովածուի էջերում:

րում, որոնք նոր են ազատագրվել: Սա ոչ միայն նպատակ ունի վեր հանել հենց ազատագրված տարածքների հայկականությունը, այլև, որ պակաս կարևոր չէ, հազարավոր հայ վերաբնակիչների մոտ ամրապնդել իրենց ապրած տարածքների հայկականության մասին պատկերացումները, դյուրացնել նրանց կողմից նոր տարածքի հոգևոր-մշակութային յուրացումը:

2004-2005 թթ. իրականացվել են Քարվաճառում գտնվող Հանդաբերդի վանքի պեղումները (Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Տ. Վրթանեսովա)¹: Պեղումների հիմնական արդյունքներից առաջնային կարելի է համարել 12-14-րդ դարերի մի շարք նոր արձանագրությունների, խաչքարերի և տապանաքարերի գյուտը: Խիստ ուշագրավ է, որ գտնվել են նաև հայերեն արձանագրություններ կրող կղմինդրների և թասերի մի շարք բեկորներ, հանգամանք, ինչը հնարավոր է դարձնում փաստել հայերեն գրի օգտագործման տարածվածությունը նաև զուտ կենցաղային մակարդակով, որն իր հերթին էթնիկության ամենաբարձր ցուցանիշներից մեկն է:

2004 թ. մայիսին դաշտային հնագիտական դիտումների միջոցով կազմվել է Շուշիի և նրա անմիջական շրջակայքի հնագիտական հուշարձանների թվայնացված ցուցակն ու դրանց տեղաբաշխման քարտեզը: Ցուցակը ներառում է պալեոլիթից մինչև 20-րդ դարի սկիզբն ընդգրկող մոտ 500 հուշարձան, ինչն էլ հնարավորություն է տալիս կանխանշել բնակավայրի և նրա շրջապատի հնագիտական հետազոտության հիմնախնդիրները²:

2005 թ. լայնածավալ պեղումներ են իրականացվել Շուշիում և շրջակայքում (Հ. Պետրոսյան, Վ. Սաֆարյան, Ն. Ենգիբարյան, Ս. Տիտանյան, Ա. Հարությունյան), որի հետևանքով հայտնաբերվել և մասնակի պեղվել են Կարկառ ամրոցն ու Շոշվա սղնախը, հուշարձաններ, որոնք լավագույնս վկայում են Շուշիի սարահարթի հայ մշակութային ինքնությունը Փամահի այստեղ հայտնվելուց առնվազն 500 տարի առաջ և ընդհուպ մինչև 18-րդ դ. կեսերը:

¹ Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Հանդաբերդի վանքի 2004 թ. պեղումների հիմնական արդյունքները, Հին Հայաստանի մշակույթը 13, Երևան, 2005, էջ 240-246:

² Պետրոսյան Հ., Շուշիի հնագիտական հետազոտության հիմնական նպատակները և խնդիրները, Հին Հայաստանի մշակույթը 13, Երևան, 2005, էջ 247-254:

2005 թ. ԳԳ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Արցախի համալսարանի աշխատակիցներից կազմված ինստիտուտի հետազոտական խումբը (Յ. Պետրոսյան, Ժ. Խաչատրյան, Ա. Փիլիպոսյան, Վ. Սաֆարյան) ուսումնասիրվել է Խաչենագետի ներքնահովտի պատմահնագիտական միջավայրը, կազմել տարածքի հնագիտական քարտեզը և հուշարձանների բնութագրական ցուցակը՝ մանրամասն թվային լուսանկարահանմամբ¹: Այժմ պատրաստ է Արցախի Տիգրանակերտի պեղումների ծրագիրը և բոլոր հիմքերը կան հավաստելու, որ այս տարի մենք ականատես կլինենք հայկական ինքնությունը դաշտային Արցախում հավաստող ընդարձակածավալ պեղումների²:

Վերջին տարիների հետազոտությունները ներկայացվել են մի շարք գիտաժողովներում, ներառյալ անցած տարվա սեպտեմբերին Իսպանիայի Վիկտորիա քաղաքում կայացած Հայկական հետազոտությունների միջազգային ընկերակցության 10-րդ համաժողովը: Արցախի հնագիտական հետազոտությունները կատարվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան ծառայությունների գիտությանը և թույլտվությամբ: Կատարված աշխատանքների մասին շահագրգիռ կողմերին հանձնվել են համապատասխան հաշվետվություններ, երևանում կազմակերպվել են երկու ընդարձակ ցուցահանդեսներ: 2006 թ. հուլիսի սկզբներին Ստեփանակերտում կազմակերպվեց Շուշիի պեղումների արդյունքները ներկայացնող ցուցահանդես և գիտաժողով՝ նվիրված Շուշիի պատմության և մշակույթի խնդիրներին: Իրականացված բոլոր հետազոտությունները զեկուցվել, քննվել և մանրամասնվել են ավելի քան 20 հրատարակություններում:

¹ Պետրոսյան Յ., Խաչատրյան Ժ., Փիլիպոսյան Ա., Սաֆարյան Վ., Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը, Երևան, 2006, էջ 361-365:

² Եվ իրոք 2006 թ. օգոստոսին Տիգրանակերտի պեղումները տվեցին սենսացիոն արդյունքներ. բացվել է միջնաբերդի ծիծեռնակապոչ շարվածքով պարսպապատի մի հատվածը, քաղաքի դարավանդներից մեկի հենապատը, կենտրոնական թաղամասի վաղբրիստոնեական բազիլիկայի մի մասը: Պեղումներով հայտնաբերված կառույցներն ու հնագիտական նյութերը հիմք են տալիս հավաստել, որ գտնվել են մ. թ. ա. առաջին դարում Տիգրան Մեծի կողմից Արցախում հիմնված Տիգրանակերտ քաղաքի ավերակները: Խաչենագետի ափին, Տիգրանակերտի մատույցներում պեղվել-մաքրվել են քարայրային-պաշտամունքային համալիրը և ժայռափոր ջրանցքը, որն ամենայն հավանականությամբ ջուր է մատակարարել քաղաքին:

Այժմ հրատարակության են պատրաստվում «Արցախի խաչքարերը», «Հանդաբերդի վանքը. պատմամշակութային միջավայրը և հնագիտական պեղումները» (համահեղինակներ՝ Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան) գրքերը, «Վաղմիջնադարյան եզակի հուշարձաններ Խաչենագետի ներքնահովտում» և «Շուշիի ու շրջակայքի խաչքարային մշակույթը» հոդվածները:

Առաջիկա 5 տարիներին Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպության և մշակութային հետազոտությունների «Կենսաց ծառ» կենտրոնի համագործակցությամբ նախատեսվում է ընդարձակ հետազոտություններ անցկացնել Լևոնագետի հովտում (Քարվաճառ), Խաչենագետի ներքնահովտում և Շուշիում (մշակութային հուշարձանների թվային շտեմարանի կազմում, պաշտպանական և պաշտամունքային համակարգերի համալիր հետազոտություն, ներառյալ հնագիտական պեղումները, հրատարակությունների և ինտերնետային կայքերի իրականացում):

Ափսոսանքով կարելի է նշել, որ այս ամենն առայժմ արվում է առանց համապատասխան մարմինների աջակցության և գնահատանքի, հաճախ դժկամ վերաբերմունքի պայմաններում: Ես վստահ եմ, որ միջոցներ են գտնվելու և աշխատանքները շարունակվելու են: Բայց սա այն չէ, ինչի մեք ընդունակ ենք, սա այն չէ, ինչ պարտավոր է անել մեր պետությունը, և ի վերջո սա ամենևին էլ այն չէ, ինչին արժանի է մեր հաղթանակած ժողովուրդն ու նրա մշակույթը:

Նախ մենք կարիք ունենք տեսական լուրջ հետազոտությունների, որոնք հնարավորություն կտան մատենագրական տեղեկությունը, արձանագրությունը կամ հնագիտական գտածոն արժեքավորել հենց էթնիկ ինքնության տեսանկյունից: Սա թերևս մեր ամենալուրջ խնդիրն է: Երբ բացակայում է մանրամասն մշակված մեթոդաբանությունը, սկսում են իշխել հայտարարություններն ու կամայական մեկնությունները:

Երկրորդ, մենք կարիք ունենք պետական մշտական, պլանավորված ֆինանսավորման: Այն անհրաժեշտ է նախ տեխնիկական հագեցվածության համար: Ժամանակակից հնագիտությունը հայտնի չափով մահ նորագույն տեխնիկական նվաճումներ օգտագործող գիտություն է, եթե ուզում ենք, որ աշխարհը լսի մեզ, պիտի նրա հետ խոսենք կիրթ լեզվով: Արցախի հնագիտական արշավախումբը, շնորհիվ մեր հովանավորների, այսօր Հայաստանի տեխնիկապես ամենալավ հագեցված

արշվախմբերից մեկն է, եթե ոչ առաջինը: Ֆինանսներն անհրաժեշտ են բուն պեղման գործընթացի համար, նյութերի լաբորատոր մշակումների, վերականգնումների, հրատարակությունների համար: Բայց ամենից առաջ պետությունը պիտի հարգի գիտնականին և դրա առաջին նշանը նրա վարձատրությունն է: Նախնադարից ի վեր գիտությունը եղել է ամենաազատ մասնագիտությունը: Մտքի ի՞նչ ճախրանք ու սխրագործություն կարող են ակնկալել մեր պետությունն ու հասարակությունը ամիսը քսան հազար դրամ աշխատավարձ ստացող, տարրական գոյատևման համար մաքառող գիտնականից:

Երրորդ, պիտի ցավով ընդունենք, որ հայագիտությունն այսօր կազմակերպվելու և ինքնակազմակերպվելու մեծ խնդիր ունի: Գիտության ներկա կառավարումը տառապում է նախ և առաջ անգունությամբ ու միջակությամբ: Մի կողմից միջակությունը խեղդում է ցանկացած հեռանկարային միտք, ամտեսում գիտական լիդերներին, մյուս կողմից պարարտ հող է ստեղծում զանազան սնապարծ, անգրագետ ու հավակնոտ տեսությունների ու անձանց համար, որոնք էլ վերջին հաշվով սպառնում են հայագիտությունը վերածել գավառական ինքնագոհության մի տարբերակի: Սա ես վավերացնում եմ լրջորեն, ցավով, շտկվելու և ուղիղ քայլելու ակնկալիքով ու համոզվածությամբ:

Կարծում եմ, որ հասարակական կազմակերպությունների և անհատների ձեռնարկած ակտիվությունն արդեն իր արդյունքներն է տալիս, վերջերս ավելի մեծ տեղ են հատկացնում մեր հետազոտություններին, առաջարկում են աջակցություն, խորհրդակցում են որոշումներ ընդունելիս: Կարծում, որ սա կարող է դառնալ հայագիտության զարգացման ուղղություններից մեկը, երբ հետազոտական պահանջը ձևավորվում է հասարակայնորեն՝ անհատների ու ԴԿ-ների նախաձեռնությամբ, և պետությունն այս կամ ծրագիրը ֆինանսավորելու ավելի մեծ հիմնավորումներ է ունենում: